ISSN 0131-5854

2-Ի ՕՐՅ

Գյուղական միտումներ

1.88

© National Library of Armenia OCR by Portmind

Արագածի Քարե լիճը:

Լուսանկարը՝ Գ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ

Շապիկի առաջին էջում՝ ՄԵՆԱՎԱՆԸ

Լուսանկարը՝ Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ

15 MAR 2013

JUN 2010

ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՆԱՉԻՐ, ՊԱՀՊԱՆԻՐ ԵՎ ՀԱՐՍՏԱՑՐՈՒ
ՀԱՅՐԵՆԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի բնություն

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՊՐԱԿ 1 (83)

(Հրատարակվում է 1961 թվականից)

ԵՐԵՎԱՆ 1988

© National Library of Armenia

որոշ քանակի հող լցնելուց հետո ոտքերով պնդացնել այն՝ բաց տարածություններ չմնալու համար, որից հետո նորից լցնել մինչև հավասարվի գետնի մակերեսին, սակայն այլևս չպնդացնել, որպեսզի ջուրը լավ ներծծվի: Հատուկ ուշադրություն դարձնել տնկման խորության վրա, արմատավզիկը գետնի մակերեսից պետք է լինի 2—3 սմ խորը, որպեսզի հողը ընտելուց հետո այն չբացվի և գետնի մակերեսին հավասար լինի:

Ծառատունկն ավարտելուց հետո բների շուրջը պատրաստել բաժակներ և անմիջապես ջրել: Ջրելուց 1—2 օր հետո ստուգել, եթե արմատները բացվել են՝ հողով ծածկել, իսկ թեքված ծառերն ուղղել և բի՛ի շուրջը գտնվող հողը պնդացնել:

Տնկման տարում, հատկապես առաջին 20—25 օրվա ընթացքում, ծառերի կպչողականության և նորմալ աճի հիմնական պայմանը արմատների տեղաբաշխման շերտում հողի բավարար խոնավությունն է: Եթե աշունը երկարատև է լինում և հողը չորանում է, ապա տնկված ծառերը պետք է ջրել երկրորդ անգամ:

Ցանկալի է ծառերը տնկելուց հետո մերձբնային տարածությունները մուլչապատել ծղոտով, տորֆով. դա զգալիորեն ընպաստում է խոնավության ապահովմանը, կանխում հողի ուժեղ կեղևակալումը: Նման միջոցառումն առանձնապես լավ արդյունք է տալիս չորային շրջաններում: Նոր տնկված ծառերի արմատները և բունը ցրտահարվելուց պաշտպանելու նպատակով խոր աշնանը կատարել հողով բուկլից՝ 25—30 սմ բարձրությամբ:

Աշնանը տնկված ծառերը խորհուրդ է տրվում էտել վաղ գարնանը՝ մինչև բույսերի հյութաշարժության սկսվելը: Հեռացնել թույլ և ավելորդ աճերը, թողնելով ձևավորման համար անհրաժեշտ ճյուղերը, որոնք կարճացնել 1/4—1/2-ի չափով, ընդ որում, ուժեղ աճերը էտել թույլ, իսկ թույլերը՝ համեմատաբար ուժեղ: Կենտրոնական ուղեկցող ճյուղն էտել 15—20 սմ ավելի բարձր, քան կողային հիմնական ճյուղերը: Էտի խորության աստիճանը մեծ չափով կախված է տվյալ վայրի կլիմայական պայմաններից: Այսպես, չորային շրջաններում ճյուղերն էտել համեմատաբար խորը, որպեսզի կրճատվի գոլորշիացման մակերեսը:

Եթե տնկիները ճյուղավորված չեն, ապա էտը կատարել հետևյալ ձևով. թույլաճ տնկիները կարճացնել հողի մակերեսից 60—65 սմ, իսկ ուժեղաճները՝ 70—75 սմ բարձրությամբ:

Ծառատնկման ագրոտեխնիկական բոլոր պայմանների պահպանումն ու այգու պարբերական խնամքը բարձր բերքի երաշխիք են:

Թրաշուշան

Լուսանկարը՝ Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԵՐԿՎՈՐՅԱԿ ՍՆԿԵՐ

Ջ. Հ. ՄԵԼԻՔ-ԽԱՉԱՏՐՅԱՆ
Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ժողովրդական առածն ասում է. «Հաջողության պահին լավ է և սունկ հավաքել»: Նշանակում է՝ սունկ հավաքելն այնքան էլ հեշտ չէ. անհրաժեշտ է դրանք փրնտրել, գտնել և շրջապատվել միայն տեսանելիներով: Սնկերի հավաքը գրավիչ զբաղմունք է: Դա և՛ հանգիստ է, և՛ բնության գրկում լինելու հաճելի զգացողություն:

Ամենից առաջ անհրաժեշտ է իմանալ, թե անտառի որ մասում է պետք սնկեր փնտրել: Սնկերը սիրում են կիսամութ վայրեր՝ հարուստ անտառային թաղիքով, բայց ոչ խիտ խոտածածկով: Լավ է հավաքել վաղ առավոտյան, երբ օդը հագեցած է խոնավությամբ և թարմությամբ: Անտառով պետք է քայլել դանդաղ ուշադիր նայելով թաղիքի, ճյուղերի և բների տակ: Սնկերը պետք է վերցնել զգուշորեն՝ ոտիկի հիմքը կտրելով դանակով, երբեմ չքաշել և ամբողջովին չհանել հողից: Հակառակ դեպքում սնկի վեգետատիվ մարմինը՝ սնկամարմինը, քայքայվում է, մինչդեռ այն բազմամյա է և կարող է բազմաթիվ անգամ պտղաբերել: Անկասկած, պետք է հավաքել միայն ուտելի սնկերը: Իսկ այն սնկերը, որոնք կասկած են հարուցում, անհրաժեշտ է վերցնել առանձին, ամբողջությամբ, զգուշորեն պտտեցնելով, որպեսզի պտղամարմինը չվնասվի, տեղադրել թղթե տուփիկի մեջ և բերել տուն՝ որոշիչներով ու տեղեկատուներով ճշտելու համար:

Եթե սնկերի հատկանիշները որոշիչ աղյուսակների (բանալի) հետ համընկնում են, ապա պետք է համեմատել նաև նկարի հետ՝ որոշման ճշտության մեջ համոզվելու համար: Իսկ ոչ մասնագետները, եթե հավաքի պատ

որ արծաթը մգանում է ծծումբ պարունակող ամիճաթթուների ազդեցության տակ: Կամ՝ գտնում են, որ եթե սոխի կամ սխտորի սոխուկները սունկ եփելու ժամանակ գորշանում են, ապա դա սնկի թունավոր լինելու նշան է: Այդ կարծիքը նույնպես ճիշտ չէ, քանի որ սոխի և սխտորի գորշացումը կատարվում է համարյա բոլոր սնկերի մեջ գտնվող տիրոզինազա ֆերմենտի ազդեցության տակ: Տարածված է նաև այն կարծիքը, թե թունավոր սնկերը չեն ուտվում որդերի և ճանճերի կողմից: Դա էլ ճիշտ չէ. դրանց մեջ հանդիպում են շատ որդնածներ: Իսկ կան նաև շատ սննդարար ուտելի սնկեր (օրինակ՝ աղվեսասունկը), որոնք երբեք որդնած չեն լինում: Ոմանք էլ կարծում են, որ պտղամսի գույնի փոփոխումը թունավորության նշան է: Դա դարձյալ սխալ է, քանի որ կան ուտելի լավ սնկեր, որոնց պտղամսի գույնը նույնպես փոփոխվում է: Օրինակ, սևուկը գորշանում է, սևանում է, եղևնու շեկլիկը կանաչում է, խայտաբղետ կովասունկը՝ կապտում և այլն: Իսկ մանացու թունավոր դժգույն ճանճասպանը իր գույնը երբեք չի փոխում և վաս հոտ էլ չունի: Հետևաբար, վերը նշված բոլոր կարծիքները իրականությանը չեն համապատասխանում:

Անհրաժեշտ է իմանալ թունավոր սնկերի որոշ ընդհանուր հատկանիշներ: Այսպես, խողովակավոր սնկերից պետք չէ հավաքել այնպիսիները, որոնք ունեն կարմիր անցքեր, քանի որ նրանց մեջ կան չուտելի դառը և թունավոր տեսակներ: Պետք չէ հավաքել նաև դժգույն խողովակներով և վարդագույն փոշիով ոտիկի վրա կարմիր ցանցիկով և դեղին անցքերով, կծու պրդպեղի համով ու կարմրագորշ անցքերով և այլ տեսակներ: Կարմիր անցքերով սնկերի մեջ բացառություն է կազմում կաղնեսունկը, որը ուտելի է և կարելի է ճանաչել հստակ արտահայտված հատկանիշով. պտղամիսը կտրելուց հետո արագ կապտում է:

Թիթեղավոր սնկերի մոտ կան բնտանիքներ, որոնց ներկայացուցիչների մեծամասնությունը թունավոր են: Դրանք ճանճասպաններն են: Վերջիններիս մոտ գոյություն ունի մի շատ բնորոշ հատկանիշ՝ ոտիկի հիմքում, դրա հետ ձուլված կամ ազատ, պարկի և օղակի առկայությունը: Գլխարկավոր սնկերի մոտ շատ տարածված հատկանիշ է ոտիկի վրայի օղակը: Կան նաև սնկերի տեսակներ, որոնք ունեն միայն պարկ: Իսկ օղակի և պարկի զուգակցումը ճանճասպանների բնորոշ հատկանիշն է: Դա պետք է իմանալ: Բայց ճանճասպանների բնտանիքի մեջ էլ են հանդիպում ուտելի շատ լավ տեսակներ: Օրինակ, կեսարյան ճանճասպանը, որը հռոմեական կայսրերի սիրելի ուտելիքն էր, վարդամոխրագույն ճանճասպանը, որն առատորեն հանդիպում է մեր սաղարթավոր անտառներում և այլն: Բայց անհրաժեշտ է դրանք տարբերել և չսխալվել:

Թունավոր են նաև վարդագույն թիթեղիկներով և վարդագույն անկյունավոր սպորներով գլխարկավոր սնկերը: Բոլորը, բնականաբար, հնարավոր չէ թվարկել: Ուստի, ավելի օգտակար ենք համարում խոսել այն թունավոր կամ չուտելի սնկերի մասին, որոնք բնակչությանը հանդիպում են ուտելի սնկերի երկվորյակներն են: Նույնիսկ ամենաարժեքավոր ուտելի սնկերն ունեն իրենց թունավոր երկվորյակները, որոնք որպես նրանց ուղեկիցներ հաճախ հանդիպում են այն վայրերում, որտեղ և ուտելիները: Այդ պատճառով էլ սունկ հավաքելիս պետք է ուշադիր լինել դրանց տեսակային հատկանիշների նկատմամբ:

Բոլորին քաջ հայտնի է անտառի արքան՝ սպիտակ սունկը: Բայց կա նաև դրա շատ տարածված երկվորյակը՝ լեղասունկը, որը չնայած թունավոր չէ, բայց չուտելի է համարվում իր դառը համի պատճառով և. եթե հանդիպեցիր կարմրագորշ գլխարկով սունկ, կփնտրեցիր ողջ կերակուրը: Անում է նույն վայրերում, ինչ որ՝ սպիտակ սունկը: Երկու սունկերն էլ ունեն միանման արտաքին տեսք՝ դարչնագույն կամ գորշ գլխարկ: Սակայն սպիտակ սնկի անցքերը և

Աղյուսա-կարմիր կեղծ կոճղասունկ
(թունավոր)

Դժգույն ճանճասպան
(թունավոր)

գլխարկի պտղամիսը սպիտակ են (ծեր սնկերի անցքերը թույլ դեղնավուն են), իսկ լեղասնկի անցքերը կեղտոտվարդագույն են և պտղամիսը, կոտրելուց հետո, դառնում է վարդագույն: Երկու սնկերն էլ ոտիկի վրա ունեն ցանցաձև նախշեր, բայց սպիտակ սնկի մոտ այն սպիտակ է, իսկ լեղասնկի մոտ՝ սևագորշ: Վերոհիշյալ սնկերը կարելի է տարբերել նաև այլ կերպ. բավական է լիցել գլխարկի ստորին մակերեսը և դառը համով անսխալ որոշել լեղասունկը:

Քաջածանոթ ծառասնկերը՝ աշնանային կոճղասունկը, ինչպես նաև ամառային կոճղասունկն ու ծմեռային սունկը նույնպես ունեն երկվորյակներ, որոնք դարձյալ դժվար է առանձնացնել: Դրանք ծծմբադեղին և աղյուսակարմիր կեղծ կոճղասնկերն են, որոնք շատ հաճախ աճում են հենց նույն բնկած ծառերի բների և կոճղերի վրա:

Աշնանային կոճղասունկը սովորաբար դեղնադարշնագույն է, իսկ վեգետացիայի վերջում ձեռք է բերում կարմրավուն երանգ: Այդ ժամանակ դրանք սկսում են նմանվել կեղծ կոճղասնկերին, մանավանդ՝ աղյուսակարմրավունին, ուստի հարկավոր է ուշադրություն դարձնել թիթեղներին: Աշնանային կոճղասնկի մոտ դրանք սպիտակ են, ծեր անհատների մոտ՝ կրեմավուն, դեղնավուն: Աղյուսակարմիր կեղծ կոճղասնկի մոտ դրանք սկզբում բաց-սպիտակավուն են (երիտասարդների մոտ), իսկ հասունացածների մոտ՝ կարմրագորշ կամ սև-ձիրապտղագույն:

Յուղասունկ
(ուտելի)

Շամպինյոն
(ուտելի)

Ծծմբադեղին կեղծ կոճղասնկի թիթեղիկները սկզբում կանաչավուն են, հետո՝ ծծմբադեղնականաչավուն, իսկ բոլորովին հասուն անհատների մոտ՝ կարմրագորշավուն: Այս սնկի գլխարկը ծծմբադեղին է:

Ամառային կոճղասնկերը հերծծված են չրով, դեղնագորշ են՝ վառ օքրավուն բլթակով, իսկ թիթեղիկները ժանգագույն են, դեղնագորշ, հասուն անհատների մոտ՝ դարչնագույն:

Ձմեռային սունկն ունի դեղնակարմրավուն լոծնացած գլխարկ և, ինչպես իսկական աշնանային կոճղասնկի մոտ՝ սպիտակ թիթեղիկներ:

Նշված բոլոր ուտելի և դրանց երկվորյակ սնկերը աճում են մեծ խմբերով: Ուստի, հեշտ է գտնել հասուն անհատներին, որոնց մոտ տարբերիչ հատկանիշները հստակ են արտահայտված:

Խոնավ տարածքներում՝ արտավայրերում, անտառի բացատներում, այգիներում, զբոսայգիներում, բանջարանոցների եզրերին, աճում են հրաշալի, առաջակարգ սնկեր՝ սովորական, դաշտային, անտառային տեսակներով շամպինյոններ, որոնց երբեմն շփոթում են մանացու թունավոր սնկերի՝ դժգույն ճանճասպանի, հոտած ճանճասպանի և այլնի հետ: Դա հնարավոր է այն դեպքում, երբ սնկերը երիտասարդ են, և տեսակային հատկանիշները դեռ հստակ չեն արտահայտված, իսկ հասուն օրինակների մոտ դրանք բոլորովին այլ են և շփոթել հնարավոր չէ:

Սովորական շամպինյոնի գլխարկը սպիտակ է, մեծատախյա, ավելի ուշ՝ մի փոքր գորշացած: Առաջին հայացքից երիտասարդ շամպինյոնի և ճանճասպանների գլխարկների գույները նման են, քանի որ դժգույն ճանճասպանի մոտ գլխարկը սկզբում սպիտակ է, ավելի ուշ՝ դեղնականաչավուն, կենտրոնում՝ ինտենսիվ գունավորված, հանախ փայլուն, բայց ամբողջովին այն ձիրապտղային երանգով է: Հոտած ճանճասպանի գլխարկը սպիտակ է, գագաթում՝ թույլ դեղնավուն: Շամպինյոնի թիթեղիկները սկզբում սպիտակ են, հետո՝ վարդագույն, հասուն օրինակների մոտ՝ մուգ-դարչնագույն կամ սևագորշ: Իսկ բոլոր ճանճասպանների մոտ թիթեղիկները միշտ սպիտակ են: Շամպինյոնի ոտիկը հիմքում հաստանում է և ունի սպիտակ օղակ: Դժգույն ճանճասպանի ոտիկը ուղիղ է, հիմքում՝ պալարաձև, վերևում՝ սպիտակ, հիմքի մոտ՝ գորշ-ձիրապտղագույն և պարկով, օղակը սպիտակ է, ստորին կողմից՝ ձիրապտղագույն, գծավոր: Հոտած ճանճասպանի ոտիկը սպիտակ է, մազմզոտ, սպիտակ պարկով և սպիտակ օղակով:

Դժգույն ճանճասպանը աճում է մեծ մասամբ սոճուտներում, ինչպես նաև խառը և սաղարթավոր անտառներում: Մանացու թունավոր է: Հոտած ճանճասպանը աճում է սոճուտներում և եղևնու անտառներում: Ուժեղ թունավոր է, համարյա չի զիջում դժգույն ճանճասպանին:

Երբեմն դժգույն ճանճասպանին կարելի է շփոթել նաև ուտելի մեկ այլ սնկի՝ կանաչուկի հետ: Վերջինս խոնավասունկ է, ունի կանաչամոխրագույն գլխարկ: Քանի որ այս երկու սնկերի մոտ էլ թիթեղիկները սպիտակ են, ապա որպես տարբերիչ հատկանիշ կարող է ծառայել օղակի և պարկի բացակայությունը՝ կանաչուկի մոտ:

Հեշտությամբ կարելի է շփոթել նաև ուտելի յուղասունկն իր ոչ ուտելի երկվորյակի՝ պղպեղասնկի հետ: Երկու սնկերի գլխարկներն էլ դարչնագույն են, լոծնացած: Սակայն պղպեղասնկի պտղամիսը կոտրելուց կարմրում է, ունի կծու պղպեղի համ՝ առանց հոտի, իսկ յուղասնկի պտղամիսը մի փոքր թթվաշ է, գույնը չի փոխում և ունի դուրեկան հոտ:

Մոխրադարչնագույն ճանճասպանը նույնպես ուտելի սունկ է, բայց կարող է շփոթվել թունավոր կարմիր ճանճասպանի հետ: Կարմիր ճանճասպանի գլխարկը կարմիր է կամ նարնջակարմրավուն, իսկ մոխրավարդագույն ճանճասպանինը՝ մոխրավարդագույն: Կարմիր ճանճասպանի թիթեղիկները սպիտակ են կամ դեղնավուն, իսկ մոխրավարդագույնի մոտ՝ գրեթե վարդագույն: Կարմիր ճանճասպանի ոտիկը սպիտակ է կամ դեղնավուն, իսկ մոխրավարդագույնինը՝ սպիտակ, ներքևում՝ կեղտոտ-կարմիր:

Սունկ-երկվորյակների այս ցուցակը կարելի է շարունակել, բայց քանի որ բոլորի մասին խոսել հնարավոր չէ, ապա մենք նշեցինք ամենատարածվածները: Այդ իսկ պատճառով էլ խորհուրդ ենք տալիս սունկ հավաքելիս ղեկավարվել միայն մեկ սկզբունքով. երբեք չհավաքել և սենդի մեջ չօգտագործել անծանոթ ու կասկածելի սնկեր, որոնց ուտելիության մեջ համոզված չեք:

Ամպը չոքել է սարին...

© National Library of Armenia